

ՄՇԱԿ

Հարկան գինը 10 բուրլի, կէս տարվան 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Ստորագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԻՐԱՎԱՆՍԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մշակի» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 բուրլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 բ., ինն և ութ ամսականը՝ 8 բ., եօթ ամսականը՝ 7 բ., վեց ամսականը՝
6 բ., հինգ ամսականը՝ 5 բ., չորս ամսականը՝ 4 բ., երեք ամսականը՝ 3 բ., երկու ամսականը՝ 2 բ., մի
ամսականը 1 բուրլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարսեղյան փողոցն, անկիւն):
Ուրիշ քաղաքներում գրվում են գինի այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համարելի սկիզբ. Հասարակական օգնութեան
գործը. — ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեփոխել
պէտք է. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ
ԹԻՒՆ. Պատերազմ. Նամակ Բօլշակայից. Նա
մակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Ար
տաքին լուրեր. — ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԻՐ
ՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱ
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղատնտեսական գործընթաց:

ՀԱՄԱԿՐԵՆԻ ՍԿԻՁԲ

Ռուսաց գործակալութեան հետագիւրը
հաղորդեց, որ հրատարակված է Բարձրա
գոյն հրաման՝ փոփոխութեան ենթարկե
լու արտասահմանից Ռուսաստան մտնող
գիւղատնտեսական մի քանի առարկաների
ներմուծման պայմանները. Այդ առարկա
նրի թւում են՝ գիւղատնտեսական մե
քենաներ և գործիքներ, հող պարարտաց
նող նիւթեր և գիւղատնտեսութեան մէջ
գործադրվող բոլորական բաղադրութիւն
ներ: Անկասկած, հետագիւրը մեծ ուրախու
թեամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Բամբակի մշակութիւնը *

Բամբակը պատկանում է այն սակաւթիւ
բույսերի կարգին, որոնք առանձին կարեւորութիւն
ունեն Ռուսաստանի արդիւնաբերութեան հա
մար: Ռուսաց գործարարներում տարեկան գործ
է անվում մինչև 12 միլիոն պուդ բամբակի:
Այդ 12 միլիոնից Անդրկովկասը տալիս է տա
րեկան 600—700 հազար պուդ, իսկ Միջին
Ասիան մինչև 3—3½ միլիոն պուդ: Այդպիսով
ուրեմն Ռուսաստանը սեփական բամբակ ար
դիւնաբերում է ոչ աւելի քան 4 միլիոն, որը
կարգւում է 1/3 մասը այն քանակութեան, որ
հարկաւոր է գործարարներին Մնացած 8 մի
լիոն պուդ բամբակի Ռուսաստանը ամեն տարի
ստանում է արտասահմանից, գլխաւորապէս Ա
մերիկայից: Հասկանալի է այժմ, որ որչափ
բամբակ էլ մենք նորից բուսցնելու լինենք, կա
րող ենք յոյս ունենալ, որ նա կը ծախվի Ռու
սաստանում:

Այն հրաժեշտ տեղեկութիւններ: Տե
ղի ընտրութեան ժամանակ բամբակի
արտը պէտք է այնպէս լինի, որ ամբողջ օրը
արեգակը վրան լինի. այսինքն նրան չը պէտք
է խամպարեն ոչ ծառերը, ոչ տները և ոչ էլ
բարձր ցանկապատերը իրանց չուարձով: Լա
ն, որ արտը թեքված լինի դէպի հարաւ, հարա
արեւմուտը և հարաւ արեւելք: Զրարքի տեղերում,
որտեղ ջրվում են արտերը, այդպիսի արտեր
լաւ են ջրվում, ճահիճներ չեն առաջացնում և
աւելի շուտ են ցամաքում, աւելի տաք են լի
նում:

* Այս յօդուածը ուղարկված է մեզ Երեւանից Եր
վան միջնակարգ կոլիտեան լիազօր ներկայացուցիչ
համար, որպէս զէ մտաւելի լինի տեղական ազգայնա
նական:

Թիւն կը պատճառէ գիւղատնտեսներին
թէ՛ այն կողմից, որ գիւղատնտեսութեան
ծախսերը մի յայտնի չափով պակասում
են և թէ՛ այն կողմից, որ վերջապէս գիւ
ղատնտեսների ձայնը լսվեց և նրանց յա
րուցած վաղուցվայ խնդիրների մի մասը
գրական լուծում ստացաւ: Տարիների ըն
թացքում, թէ՛ զանազան փողովներում,
թէ՛ գեմալօի և գիւղատնտեսական ընկե
րութիւնների նիստերում շատ անգամ
քննվել է գիւղատնտեսութեան օժանդակող
առարկաների ներմուծման հարցը և որո
շում է կայացել՝ դիմել կառավարութեան
պակասեցնելու կամ բոլորովին վերացնելու
ներմուծող առարկաների մասը: Սակայն
իրերի վիճակը չէր փոխվում, և գիւղում
ներքին միտում էին միայն իբրեւ բարի ցան
կութիւններ, առանց գործնական հետե
ւանքի:

Այժմ Բարձրագոյն հրամանով դրվեց
նոր ուղղութեան առաջին քայլը և ցան
կալի է, որ գիւղատնտեսութեան շահերի

նում, նրանց վրա անպէտք խոտ քիչ է բուսնում
և բամբակի հասնելը բաւականաչափ առաջ է
ընկնում: Օրինակ, Քուրթայի նահանգում, որ
տեղ խոնաւութիւն շատ կայ, միայն այդպիսի
թեքված արտերը կարող են պէտքական լինել
բամբակի համար, իսկ ուշ չորացող և տաքացող
հող անկարող կը լինի աջող բերք տալ:

Հողի ընտրութիւնը: Բամբակի համար
այն հողն է լաւ համարվում, որը պարունակում
է իր մէջ բաւականաչափ աւազ, մանր քարեր,
որոնցից հողը ստանում է փերութիւն և շուտ է
տաքանում: Շատ լաւ են նոյնպէս և սևահող
կամ կիր պարունակող հողերը, մի խօսքով այն
պիսի հողեր, որոնք մեղ մօտ, Կովկասում, հա
մարվում են ցարմարադոյնը պարտէլի կամ բօս
տանիների համար:

Սերմի ընտրութիւնը: Սերմեր ջուկելու
ժամանակ պէտք է դանակով մի քանի սերմ
կիսել և նայել՝ եթէ միջուկը պարզ գոյն ունի,
որտէ աչքի ընկնող սև կէտերով այդ ցոյց է
տալիս, որ սերմերը լաւ են, իսկ եթէ միջուկը
մուլի կամ մուրիւր գոյն ունի, այն ժամանակ
նրանք համարում են անպէտք սերմեր:

Հողի մշակումը: Հողը պէտք է աշխա
տել աշնան հերկել: Լաւ կը լինի հերկել
գութանով 4—5 վերջով խորթիւնամբ, իսկ
զարման նորից արօրով կամ ջուլով՝ խաչածէ
դէպի աշունքվայ հերկածը և ցաքան քշել, յետոյ
հաւաքել բոլոր աւելորդ խոտերը և ցանել:

Նիժէ չափովեց աշնան հերկել հողը, այն ժա
մանակ անհրաժեշտ է հերկել յունվարին, փե
տրվարին կամ ամենաուշը՝ մարտի սկիզբներին:
Ընդհանրապէս հարկաւոր է աչքի առաջ ունե
նալ, որ ինչքան հողը շուտ և խորն է հերկված,
որչափ ուշադրութեամբ է կատարված մշակու
թիւնը, այնչափ բերքը աւելի աւատ է ստաց
վում, որովհետեւ լաւ հերկելը և հող պատրաս
տելը մի տեսակ պարարտացումն է:

Ցանքը: Բամբակի ցանքը ամբողջ Անդր
կովկասում պէտք է կատարվի ապրիլի 1-ից
մինչև 20, յամենայն դէպս երբեք ոչ աւելի ուշ
քան մայիսի 1-ը: Ցանելը անհրաժեշտ է կանո
նաւոր:

պաշտպանութիւնը դառնայ մի սխտեմ
և իրագործվի կենքի մէջ հետեւողակա
նութեամբ: Այն դիւրութիւններով, որ
այժմ արված է, գիւղատնտեսը միջոց ու
նի է փանայնել հողի մշակութիւնը, բար
ւոքել հողի յատկութիւնը և ստանալ ա
ւելի է փան արգիւններ: Իսկ այդ հան
գամանքները աւելացնում են գիւղատն
տեսի զուտ արգիւնը և նրան միջոց են
տալիս մրցութեան մէջ մտնել այն երկր
ների հետ, որոնք ներկայումս՝ շնորհիւ գիւ
ղատնտեսական կատարելագործութիւնների
արգիւնաբերում են է փան ապրանքներ:

Ներկայ կարգադրութիւնը ուրախալի է և
այն կողմից, որ ցոյց է տալիս թէ՛ կա
ռավարութիւնը հակված է ընթացք տալ
գիւղատնտեսների պահանջներին: Պէտք է
օգտվել այդ տրամադրութիւնից և մշակ
ված առաջարկութիւններով ցոյց տալ թէ՛
ի՞նչ բարեփոխման կարօտութիւն ունի
երկրագործ փողովները:

ՀԱՍԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՐՈՐԾԸ

Նիժէ Հասարակական խնամատարութեան
գործը, աղքատներին, խեղճերին և աշխա
տելու անկարող անձանց օգնելու գործը,
վերջապէս մասնաւոր և Հասարակական
բարեգործութիւնը քիչ է զարգացած մեր
Հասարակութեան մէջ և գտնվում է վատ
պայմաններում, դրա գլխաւոր պատճառ
ներից մէկն էլ այն է, որ մեզանում
բարեգործութիւնը առհասարակ չէ կազ
մակերպված: Հասարակական խնամա
տարութեան գործը խելացի, կանոնաւոր
հիմունքի վրա չէ դրված և այդ պատճա
ռով էլ մեր բարեգործութիւնը լինում է
կիսատապալտ, անկատար և շատ անգամ
բոլորովին իր նպատակին չէ հասնում:

Նաւոր շարքերով, այնպէս հաշուով, որ շարքը
շարքից հեռու լինի 1—1½ արշին, իսկ թուի
թուից 1/2 արշին: Կարելի է թողնել միմեանց
մօտ և երկ-երկու բոյս, միայն այդ դէպ
քում պէտք է հետեւել զգուշ 1 արշին հե
ռաւորութիւն ունենալ: Մի դեպքում զրա
պէտք է ցանել 2—2½ պուդ սերմ և ոչ աւելի
քան 3 պուդ, որովհետեւ որքան որ խոտ է ցա
նած լինում բամբակը, այնքան բերքը պակա
սում է: Կանոնաւոր շարքերով ցանելը անհամե
մատ լաւ է, որովհետեւ այդպիսով հեշտանում են
բոլոր յետագայ զարգացնողները, օրինակ ջրեւ
նայեցող խոտեր հեռացնելը, հողի վերի կեղեւ
փափկացնելը, բամբակի հաւաքելը և այլն և
այլն. բացի այդ, այդպէս ցանելով բոյսերը կա
րողանում են աւելի շատ և աւելի կատարեալ
կերպով ստանալ արեգակի ճառագայթները, բեր
քը անհամեմատ շատ է լինում և բամբակի
հասնելը առաջ է ընկնում, որ կարեւոր նշանա
կութիւն ունի մի քանի տեղերում: Կանոնաւոր
շարքերով ցանելը կարելի է կատարել և ձեռ
քով, բայց գործը աւելի դժբաղնելու համար
նպատակաւորաբար է գործածել ամերիկական
ցանելու գործիքները (Թիֆլիսում հասն արժէ
50 բուրլի): ակրաները փորելով արօրով:

Բամբակի ցանելը ամենամեծ նշանակութիւն
ունեցող գործողութիւններից մէկն է, որովհե
տեւ եթէ կանոնաւոր և լաւ է կատարված այդ
գործը, այն ժամանակ կարելի է ասել, որ կիսով
չափ ապահովված է բերքը: Ցանելուց յետոյ
ցանքը պէտք է ծածկել հողի շատ բարակ շեր
տով, օրինակ 1/2 վերջով և ոչ աւելի քան 1 վեր
ջով հաստութեամբ. այդ կարելի է անել ցա
քանով կամ տախանով:

Ջրելը: Նիժէ բամբակը հարկաւոր է լինում
ջրել ցանելու ժամանակ (որը համարեա ամեն
տեղ ընդունված է Գանձակի, Բաղուրի և Ներա
նի նահանգներում), այն ժամանակ աւելի լաւ է
արդէն պատրաստ հողը մինչև ցանելը ջրել
տեղական բարձրաւով «արալ» անել, իսկ 3—4
օրից, երբ հողը մի փոքր կը չորանայ, արօրով
երեսանց հերկել և յետոյ արդէն ցանել: Նիժէ

Պուք տեսնում էք, որ շատ անգամ օգնու
թիւն հասցնում է նրանց, որոնք պէտք
ունեն Հասարակական օգնութեան և կա
րող են իրանց սեփական ոյժերով, աշխա
տութեամբ ապրել, իսկ շատերը, որոնք
խսկապէս արժանի են Հասարակական օգ
նութեան, մնում են անօգնական: Բայց
ի՞նչ ձեռք կազմակերպել բարեգործու
թիւնը և Հասարակական խնամատարու
թեան գործը, որպէս զի օգնութիւնը ի
րական լինի և զուր չանցնի:

Այդ խնդրով զբաղվեց նորերս Փրան
սիայի Հասարակական խնամատարութեան
գերագոյն խորհուրդը („Conseil superieur
de l'assistance publique“) և մշակեց
հետեւեալ հիմունքը. — 1) Հասարակական
օգնութիւն արվում է նրանց, որոնք
ժամանակաւորապէս կամ կատարելապէս
չունեն ֆիզիկական հնարաւորութիւն
հայթայթելու իրանց համար ապրուստ:
2) Հասարակական խնամատարութեան պէտք
է զիմել, երբ օգնութեան ուրիշ միջոցնե
րը սպառված են: 3) Հասարակական խ
նամատարութիւնը, ըստ էութեան, պէտք
է համայնական լինի: Համայնքը պէտք է
ցոյց տայ այն անձանց, որոնք պէտք ունեն
Հասարակական խնամատարութեան, որով
հետեւ նա միայն կարող է ձանաչել նրանց:
4) Խնամատարութեան կազմակերպութիւ
նը պէտք է այնպէս լինի, որ համայնքը
ինքն ֆինանսական կողմից չա՛հ ունենայ
կարօտեալ անդամների թիւը սահմանա
փակելու մէջ: 5) Հասարակական խնամա
տարութիւնը — ազգային համբաւելութեան
գործ է: Հասարակութիւնը պէտք է իրա
գործի այդ խնամատարութիւնը ոչ թէ
անհատի վերաբերմամբ, այլ և խմբերը
պէտք է իրագործեն խմբերի վերաբերմամբ,
հարուստ համայնքները պէտք է օգնեն

ցանկանում են, որ սերմերը շուտ ծիւրեւ տան,
այն ժամանակ մինչև ցանելը մի կամ երկու օր
սերմերը հասարակ ջրել մէջ թրջում են: Նր
արտը մինչև ցանելը ջրված է եղել, անպէտք
խոտերը աւելի քիչ են բուսնում, հողը աւելի
փոխը է մնում, հողի երեսին կեղև չէ գոյա
նում և առհասարակ թէ՛ միաժամանակ են ըս
կում ծիւրերը դուրս գալ և թէ՛ բոյսերը համե
մատաբար աւելի ուշ են ջրել կարելի գտնու
թիւն: Իսկ եթէ ջրում են արտը ցանելուց յետոյ, այն
ժամանակ բոլորովին աւելորդ է մինչև ցանելը
սերմերը թրջելը: Արեւելեան Անդրկովկասում
համարեա ամեն տեղ ջրում են բամբակի ցանե
ւը, իսկ եթէ մի օր և է տեղում կլիմայի թէ՛
հողի խոնաւութեան պատճառով չեն ջրում,
ինչպէս, օրինակ, Քուրթայի նահանգում, Զաքա
թալի կողմերում կամ Կարեւլում, պատճառն
այն է, որ այդ տեղերում առանց արհեստա
կան ուղղման էլ կարելի է լաւ բերք ունենալ:
Փամենայն դէպս՝ բամբակ ջրելիս պէտք է մեծ
զգուշութիւն ցուցնել, աչքի առաջ ունենալով
այն, որ ջրելը նպաստում է հողի տաստիկ
կարծրանալուն և ցրտացնում է նրան, հողի
մակերեսին կեղև է գոյանում և նա յետոյ
տրաւորաբար է. բացի այդ անպէտք բոյսերն էլ
սկսում են աւատ զարգանալ: Ուստի եթէ որ և
է յոյս կայ, որ ծիւրերը միաժամանակ և լաւ
կը սկսեն դուրս գալ, աւելի լաւ է բամբակի
ցանքը չը ջրել: Օրինակի համար, Կարապաղի
փորձնական աղաբակում արդէն մի քանի տարի
է, որ աշնովում է ցանելու ժամանակ չը
ջրել, որովհետեւ այդ ժամանակ, մօտաւորապէս
ապրիլի կէսին, այնտեղ սկսում են չորանալ
անձրեւները և այնքան թացացնում են հողը, որ
երբեմն աւելի շատ են տալիս, քան անհրա
ժեշտ է:

Բամբակի խնամքը: Նիժէ հողը ջրելուց
կամ անձրեւներից կեղև է բուսնում, այն ժա
մանակ անհրաժեշտ է կամ ցաքանով կամ տախ
անով փափկացնել, որ ընդոյ ծիւրերը չը դժուա
րանան դուրս գալ: Սկզբներում բոյսերը առ
հասարակ դանդաղ են զարգանում, ուստի պէտք

աղքատ համայնքներին, հարուստ նահանգները՝ աղքատ նահանգներին։

Քիֆիսում կան, օրինակ, բազմաթիվ բարեգործական հաստատություններ, որոնց ամենքի նպատակն է օգնել կարօտներին, բայց որովհետև օգնությունն օգնողի ընդհանուր կազմակերպությունն էր կայ, ուստի բոլոր բարեգործական և խնամատար ընկերությունները գործում են խորհրդակցությամբ, առանց միությունների և կապի։ Իսկ դրա հետևանքն այն է լինում, որ մինչև մեկ օգնությունն է ստանում մի քանի տեղերից, ուրիշները օրերով սոված և անօգնական են մնում։ Նախ լավ էր լինի, որ հասարակական խնամատարությունները գործը, ինչպես այդ ընդունված է շատ քաղաքակրթ երկրներում, իր ձեռքում կենտրոնացնե, օրինակ, քաղաքային վարչությունը, բաժանելով քաղաքը թաղերի և հաստատելով թաղական հոգաբարձու թիւնն էր։ Նվթեր և է մի թաղ անկարող է իր կարօտներին օգնել, նրան պետք է օգնե քաղաքային վարչությունը, որը, այդ նպատակով, կարող է դիմել զանազան մասնաւոր և հասարակական բարեգործական ընկերությունների օգնության։

Այդ եղանակով, թէ իսկական կարօտները օգնություն կը ստանան, թէ քաղաքը ճիշդ գաղափար կունենայ իր աղքատների մասին և թէ բարեգործական հաստատությունները կը կարողանան խելացի և նպատակայարմար ուղղություն տալ իրանց գործունեության։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԲԱՐԵՓՈՒՆԵԼ ՊԵՏԻ Է
I

Ամեն մի ժողովուրդ, որը կազմակերպվում է զարկով գոյություն է ստանում, անպայման հեթանոս է, կամ առելի ճիշդ՝ ընդունակ է փոփոխվելու ժամանակի հետ, յարմարվելու դարի պահանջներին։ Հակառակ դեպքում, ժողովրդի կենսը տեղական է լինում, նա կանգ է առնում, քարանդակ է կեն ճանապարհին։ Նոյնը կարելի է ասել այս և այն ազգի մէջ եղող իւրաքանչիւր դասակարգի, իւրաքանչիւր հիմնարկության վերաբերմամբ։ Ամեն մի դասակարգ կամ հիմնարկություն այնքան է գոյություն ունենում, որքան նա համապատասխանում է ժամանակի ոգուն, ժողովրդի կենսական պահանջներին, նրա կարիքներին։ Հենց որ մի դասակարգ կամ հիմնարկություն յետ մնաց իր ժամանակից, չըմբռնէ

է կարելի չափ աշխատել օգնել նրանց, այսինքն, եթէ տեսնում էք, որ շատ խիտ է ցանկված, պէտք է հարազատ ջանքեր կրկնեք շարժված ընթացքում, սկսած առաջին ծիւնը երևալու օրից։ Աւելորդ խոտերը մեծ զգուշութեամբ պէտք է հեռացնել և, որ ամենագլխաւորն է՝ հողը փութացնել, որպէս զի բոյսերը սկսեն արագ և լաւ ճանաչող Սամուկայ ընթացքում պէտք է մի քանի անգամ քաղ հանել և հողը փութացնել մինչև մի վերջին խորութեամբ՝ արտի ամբողջ տարածություն վրա, որովհետև հողը փութացնելով օդը և լոյսը աւելի շատ են կարողանում մտնել հողի մէջ և մի և նոյն ժամանակ թոյլ չեն տալիս, որ գետնի ստորին շերտերից շատ խոնավութիւն դուրս գայ, բոյսը սկսում է աւելի լաւ աճել, աւելի պտղատու լինել և արագանում է բամբակի հասնելը։

Այն դէպքում, երբ արտը ցանկված է կանոնաւոր շարքերով, հողի փութացնելը նպատակաւոր և կատարել անհրաժեշտ գործընկերություն է։ Այդ գործընկերությունն է 25-ից մինչև 30 բուր- լիով։ Այդ գործընկերությունը ունի, որ նա խորաբերում է 20—30 մարդ և բայց այդ հողը ամբողջ պարտաւորվում է, որ բամբակից յետոյ ցանած բոյսերն էլ մեծ արդու- թեամբ են բուսնում։ Այս գործընկերությունը պէտք է գալիս և խաղողի այգու, ծխախոտի, սիմինդրի, գերչակի և այլ շատ բոյսերի համար։ Նվթեր գործընկերություն է մի քանի նպատակների համար, անկասկած նրա վրա արած ծախքը թիվնում է և կատարելագործությունն ամոցները հեշտանում։

Արտուելը։ Նրբոր բոյսը հասնում է 3/4 ար- չնի, այն ժամանակ օգտակար է բոյսի ծաղիկը մի փոքր կտրուել, դրանով բամբակի հասնելը արագանում է, բայց այդ գործընկերությունը պէտք է կատարել ոչ ուշ յուլիսի 1-ից, եթէ ոչ բամբակի զարգացումը կարող է կանգ առնել։

Հիւանդութիւններ։ Բամբակի հիւանդութիւններից Անդրկովկասում ամենից շատ է

նկց ժամանակի յեղափոխող ոյքը, չիւրացրեց վերանորոգվելու անհրաժեշտութիւնը՝ նա կրկն- նի, կը մեռնի, կանհետանալ՝ չը թողնելով ոչ մի յիշատակ։ Այդպէս ընկան հին հեթանոսական կրօնը, ֆէոդալական իշխանութիւնը, ճորտական կարգը և վերջապէս այժմ ընկնելու շաղի վրա է կանգնած կղերը ամբողջ Եւրոպայում... Մեր կարծիքով, այս տեսակետից պէտք է ըննել և լուսարանել մեր հոգևորականության անկման հարցը, որը վերջին ամիսներում կրկին հրապարակ է եկել «Մշակի» էջերում։

Այդ հարցը հետաքրքիր է դարձել այն տեսակետից, որ իւրաքանչիւրը հնարաւորութիւնը ունի զգուշացնել «Մշակի» էջերից, իր կարծիքն է յայտնում և այդպիսով իրանց կարծիքը յայտնեցին մեր ժողովրդի շատ դասակարգերից մարդիկ՝ ուսանող, համալսարանաւարտ, ուսուցիչ, սարկաւադ, քահանայ և այլն,—բոլորը իրանց ասելիքը ասացին, իրանց տեսակետը արտայայտեցին։ Բացի մի երկուսից, բոլորը միաձայն պնդում են թէ՛ որովհետև աստիճանը մնացել է սղտ- ներին, այդ պատճառով մեր հոգևորականութիւնը դնալով ընկնում է։ Բայց թէ ինչու աստի- ճանը մնացել է սղտներին և ոչ թէ կրթված- ներին, այդ հարցը ոչ ոք չէ տալիս և նրա պատճառների մէջ մտնել չէ ուզում։ Օրինակ, ինչու մեր դպրոցաւարտ երիտասարդները ուրա- խութեամբ յանձն են առնում նահատակութեան չափ ծանր դիւղական ուսուցիչ պաշտօնը 300—400 բուրլի ուժիկով, բայց չեն համաձայնում նոյն իսկ քաղաքներում քահանայ լինել։ Արդեօք լիկ այս փաստը բաւական չէր համոզվու, որ ամբողջ հոգևորական դասակարգը յետ է մնացել, նրա կազմի մէջ անժամանակակից, աւելորդ կարգեր են մնացել, կարգեր, որոնք չէզոքաց- ըն են այդ դասակարգի հրապոյրը։

Վիճարանողները այդ հարցը քննադատապէս բաժանել են երկուսի—կուսակրօնական և քա- հանայական։ Առաջինը աւելի քիչ պաշտպանող- ներ ունի, քան երկրորդը և այդ քչերի թիւն պատկանում է պ. Լևոն Սարգսեան, որի յո- դուածի առկիով մի քանի խօսք կանեց յետոյ։ Մի կողմ թողնելով այն բոլոր գրութեանը, որոնք լոյս տեսան այդ հարցի առթիւ և որոնց մէջ դարձանք շարժելու չափ միամիտ կարծիք- ներ կային, օրինակ, այն, որ կարելի է այդ դա- սակարգը վերադարձնել, որ այժմանին յայտն- դում է վաղը,—յետոյ իր յաղթանակով, տես- նեց թէ նոյն իսկ այդ հարցը դարձնելով պ. Ս. Մալումանի, որքան է մօտենում հարցի տրա- մաբանական լուծման։

Առաւելորդներին միանգամայն հակառակ լի- նելով, մի հանգամանք, որին համաձայն են և

տարածված ժանգը (չօռ կամ աղ)։ Այդ հի- ւանդութիւն առաջացնողները փոքրիկ սունկեր են, որոնք դարգանում են սերունդների և պտուղ- ների վրա։ Վերջիններս սկսում են կարմրել, յե- տոյ մոխրի գոյն են ստանում և թափվում։ Հի- ւանդութեան երևալու պատճառներն են կամ աւելորդ խոնավութիւնը կամ հողի ուժապառ- լինելը և կամ անհոգ խնամատարութիւնը։ Ար- տերը պարտաւորացնելով և խնամք աւելացնելով՝ կարելի է մարաւել աչք հիւանդութեան դէմ։

Սերմի ջուկելը և ընտրելը։ Լաւ սերմը անկասկած մեծ նշանակութիւն ունի գործի ա- ղողութեան համար, եթէ տարուց տարի սեր- մերը վերցվեն լաւ դարգացած թուփերից և այդ թուփերի վրա գտնվող միջին խողովակներից, որովհետև դրանք աւելի լաւ են լինում։ Նւ խո- չոր այդպիսի սերմերից կարելի կը լինի ստա- նալ շուտ հասնող, լաւ բերք տուող և անհամե- մատ լաւ յատկութիւն ունեցող բամբակ։ Յամե- նայն դէպու, ցանկելու համար պէտք է գործ ա- ձել լաւ հասած և չորացած սերմեր։ Թփի ներ- քին կամ միջին մասերից հաւաքած սերմերից բամբակը շուտ է հասնում։ Պէտք է աշխատել ոչ մի դէպքում չը գործածել այնպիսի սերմեր, որոնք կամ վերին մասից են հաւաքված կամ շատ ուշ են հաւաքված, որովհետև առհասարակ դրանք բոլորովին հասած չեն լինում և չեն կա- րողանում տալ լաւ բոյսեր։

Հողի ուժապառ- լինելը։ Ոչ մի բոյս այնքան քիչ չէ յոգնեցնում հողը, ինչպէս բամ- բակը։ Նվթեր մեծ կարողանալիքը վերադարձնել հողին բամբակի ծրնը և սերմերը աղբի ձևով, այն ժամանակ հողը համարեն թէ ուժապառ- չի լինի, իսկ եթէ վերցնեք և բոյսը, և սերմե- րը, և բամբակը և ոչինչ դրանցից չը վերադարձ- նեց հողին, այն ժամանակ հողը սաստիկ ու- ժապառ- լի լինում։

Հողի պարարտացումը։ Բամբակի ար- տը պարարտացնել կարելի է ամեն տեսակի աղ- րով, մոխրով, կիրով և այլն։ Մանուսնող լաւ պարարտանում է հողը զանազան բուսական մնացորդներով, որովհետև նրանք նպաստում

շատերը, քահանայութեան մասին պ. Մալու- ման ասում է, թէ այդ դասակարգի մէջ չարժէ և չը պէտք է մտնել, որովհետև արժանաւոր, կրթված մարդիկ հալածվում են և անարժանե- իր ձեռնադրվում։ Իսկ եթէ կրթվածները չը հա- լածվէին, ուրեմն պ. Մալուման խորհուրդ կը տար քահանայ լինել։ Բայց միթէ հարցը այդ ձեռնադրանով լուծումն կը ստանար։ Այդպիսով չը պէտք է բաւականանար նա, համոզված լի- նելով, որ շատ պէտքական մարդիկ, ժամանա- կից յետ մնացած այդ դասակարգը մոտենու, կախանդված լինելով, անգործունեութեան մատն- վելով, մուրացիկ լինելով՝ կանդաղեցնային, ինչպէս և լինում է։ Այս հարցին աւելի մօտե- նում է պ. Դաւթեանը («Մշակ» № 71), որ հա- մաձայն լինելով պ. Մալումանի հիմնական տեսակետին, աւելացնում է թէ՛ «կրթված և առաջադէմ դաղափառներ դաւանող մարդը չէ կարող հաշտվել այն կարգ կաւ հիւանդների հետ, որոնք շատ վաղուց են կորսել ժամանակակից կենսից և յետ մնացել։ Նւ իսկպէս, այդպէս էլ է։ Այժմ կրթված մարդը, առաջադէմ դաղա- փառներ դաւանող խորշում է հոգևորական կու- չումից, ցանկացողները կամ անհատներ են, որոնցով չէ կարելի հարցը այս կամ այն կերպ բացատրել, կամ այնպիսիները, որոնք չը կար- դանալով հանգամանքները ուսումնասիրել, ընկ- նում են այդ շրջանը ոչ սեփական համոզմուն- քով, այլ, դիցուք, ուրիշ խորհրդով, ինչպէս պ. Մալումանին դիմող երիտասարդը, և կամ այն- պիսիները, որոնք ակնկալում են անարժան մի- ջոց և ուրիշ ոչինչ։ Մինչև անգամ տղաները ձեռնադրվում են՝ առաջնորդվելով որոշ հաշի- ներով, ոչ բարոյական տեսակետ, և ոչ էլ կրօ- նական կամ ժողովրդական կարիքներ, ոչ։ Այդ- քան ձեռնադրութիւնները, մանաւանդ անար- ժանների, պէտք է բացատրել միմիայն նիւթա- կան տեսակետով, ձեռնադրողը նախ յաղաթը է տալիս իր կողմնակիցների ցանկութեան և երկրորդ՝ հարկից ազատվելու էլ քիչ քան չէ գիւ- դացու համար։ Իսկ ձեռնադրողը ունի իր զբը- լամբը, ձեռնադրութեան վարձը, մի քանի տասնեակ բուրլիներ։ Վերջերք այդ ակնկալու- թիւնները, և կը տեսնեք, որ տղան էլ խոր- չում է այդ կուչումից, նա էլ չէ ուզում քահա- նայ լինել, որ մնաց կրթվածը։

Ա.—Դօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Լուում ենք, որ Քիֆիսում կազմվում է այգե- գործների մի ընկերություն, որի նպատակը պէտք է լինի մոյցնել կատարելագործութիւններ այգե-

նի հողի փութանալուն և հետեւաբար բոյսի աղող դարգանալուն և շուտ հասնելուն։

Բամբակը աւելի աղող է դարգանում այն ժա- մանակ, երբ առաջինից տարիները այդ արտը եղած է աւելցող կամ եռնից, խոտհարից, չա- լըքի և կամ բոստանի տեղը։ Իսկ բամբակ ե- դած տեղում միւս տարին շատ լաւ են բուս- նում ցորեն, գարի, եգիպտացորեն և առհասա- րակ հացաբոյսերը։

Քաւմիներից պահ պահելը։ Այն տեղե- րում, որտեղ ամառվայ կամ մայրամառից աշուն- վայ սկզբներում սաստիկ քամիներ են լինում, նպատակաւորաբար է այնպէս անել, որ ջանու- կով կամ ծառեր լինեն կամ ցանկապատեր։

Անասուննի երկից պահ պահելը։ Տնա- լին կենդանիներից պահպանելու համար ցանդ- քը, աշխատում են արտի չորս կողմը ցանել հողը 2—3 չափը գերչակ, անասունները չեն սիրում գերչակի հոտը և նրա տերեւների համը։

Հաւաքելը։ Բամբակը հաւաքելու ժամա- նակ պիտի ուշադրութիւն դարձնել, որ նա բու- րորովին հասած և չոր լինի և պէտք է աշխատել իւրաքանչիւր անգամի հաւաքածը առանձին պահել։

Չորացնելը և պահելը։ Բամբակը ան- հրաժեշտ է պահել չոր և քամի խաղացող դա- լիքներում, հակառակ դէպքում խոնավութիւնից և օդի տաքանալուց բամբակը տաքանում է, փչանում և դեղնում, իսկ սերմերը փոտւում են։ Բամբակը կարելի է աշունքին արեգակի տակ չորացնել, որից նա թէ լաւանում է և թէ սպի- տակում։

Սերմը անջատելը։ Երբոր բամբակը բա- ւական չորացել է, այնպէս որ սերմը առանձիկ լաւ կտրվում է, այն ժամանակ միայն պէտք է խոտակել, հակառակ դէպքում սղոցի բերանը շուտով բռնվում է և սերմի վրա բաւականաչափ բամբակ է մնում։

Սերմերը իւրեւ անասունների կե- րակուր։ Առհասարակ երբեք չը պէտք է բա- մբակը ծախել չը մարքած, այսինքն սերմերը հետը, որովհետև այդ սերմերի մէջ կան շատ

գործունեան մէջ, կազմակերպել արդիւնքների վաճառումը սեփական խանութի միջոցով, կա- տարել այգեգործների համար զանազան պա- տակներ, օրինակ, բերել տալ սերմեր և գոր- ձիքներ և վերջապէս կապ հաստատել ուրիշ քա- ղաքների հետ, հայկայիկներով նրանց բնակիչնե- րին տուններ, ծաղիկներ, սերմեր և մրդեր ա- մենաէական գնով։

Մեզ հաղորդում են, որ մասնագէտ Նաչկիսկի, որ դիտել էր Վախթիստի տուղեւու բլքեր օտ հիւանդութեան նշանները, այժմ վերջականա- պէս հաստատում է, որ բլքերում գոյութիւնը անհեղեղի է։ Ուրեմն այդ հիւանդութեան դէմ միջոցները պէտք է այսուհետ գործադրվեն կա- նոնաւոր և պարտաւորեցուցիչ կերպով։ Բլքե- րում դէմ օգտակար է գործածել պոնձի ար- ջաւայ, որտեղով նրա ջրով խաղողի վաղերը։ Բացի այդ պէտք է աշնանը հաւաքել վաղից թափված բոյս տերեւները և այլեր։ Նվթեր այդ նախազգուշութիւնները չը գործադրվեն, խաղող- դը փչանում է, սևանում, ձնվում և փոտւում։ Բլքերում, ինչպէս և ֆիլիստերա ու միլիոն հի- ւանդութիւնները Եւրոպա եկել են Ամերիկայից։

Վ. Վախթիսկի, որ առևտրի դեպարտամեն- տի ղեկավար է, շուտով ինչպէս լսել է «Траж- данието» քաղաքը, կը ստանայ աւելի բարձր պաշտօն, այն է՝ կը նշանակվի երկրագործու- թեան միւնիստրի օգնական։ Վ. Վախթիսկի իր մասնագիտութեամբ դիւղատեսու է և նոր պաշ- տօնում նա կարող է գործել մեծ հմուտութեամբ։ Նա վաղուց գործում է դիւղատեսուական աս- պարէզում և յայտնի է իր բազմաթիւ յօդուած- ներով և թարգմանութիւններով։ Վախթիսկի ե- դել է Արկասում և ուսումնասիրել է մեր ար- դիւնագործութեան վիճակագրութիւնը։ Բարու- ցիներին մասնաւորապէս նա յայտնի է իւրեւ նախագահ այն նիստերին, որ տեղի ունեցան մի քանի տարի առաջ Պետերբուրգում նախա- գործների դաշնակցութեան ծրագրերը գնելու ժա- մանակ։

«Московскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ Վովկանի կառավարչապետին շուտով տրվե- լու է լրագրութիւն արդիւնք օտարապատու- ներին անդադ կառավարելու ձեռք բերել Վովկա- նում և Անդրկովկասում։ Սրանից յետոյ, ամեն անգամ, երբ մի օտարապատու կամենայ մի կառավար զինել, պէտք է առաջ թողնուի իւրն ստանալ։ Այդ արդեւքը ընդհանուր քննարու- թիւն չը պէտք է ունենայ և օտարապատուին- քը չը պէտք է գրկվեն հնարաւորութիւնից առե-

լաւերը, որոնք կարող էին լաւ սերմացու լինել, իսկ ինչ վերաբերում է մնացած սերմերին, նը- րանք էլ յարմար են, իւրեւ կենդանիների համար կերակուր։ Պէտք է նկատել, որ այդպիսի կեն- դանիկները ստացած աղբի, էլ լաւ պարարտաց- նող նիւթ է բամբակի արտերի համար։ Միայն չը պէտք է կենդանիներին տալ 3—4 կամ 5 ֆունտից աւելի, խառնելով նրան դարմանի հետ։ Այդ բանակութիւնը կարելի է տալ եզնե- րին, քառնեւերին, ստերի կովերին, և ոչ աւելի 3 ֆունտից կամ խոտու կովերին, որովհետև կա- թը անախտի համ է ստանում, ոչխարներին կարելի է տալ մինչև 1 ֆունտ, սերմերով կերակրե- լուց կենդանիների թէ միւսը, թէ ուժը և թէ կաթն աւելանում է։ Այն դէպքում, երբ սերմից իւր է անվաճ և կենդանիները ստանում են միայն նրանց քուսը, սրան կարելի է աւելի 2—3 չափը գերչակ, անասունները չեն սիրում գերչակի հոտը և նրա տերեւների համը։

Հաւաքելի ծախելը։ Աւելի լաւ է, եթէ բամբակը դուտ, մարդը բամբակ է, առանց սեր- մի։ Նա գնալի համար ձեռնառու է։ Երկրորդ սերմ հանելը այն օգուտը ունի, որ այդ սեր- մից կարելի է ընտրել լաւերը սերմացուի հա- մար։ Առանց սերմի բամբակը աւելի թանկ է ծախվում, քան սերմով։

Սերմից մաքրելը։ Բամբակ մաքրելու գործընկերը, որ յայտնի են Աոտոնիցին անու- նով, Քիֆիսում ծախվում են 250—300 բուր- լիով և մաքրում են մի օրում (24 ժամ) մինչև 40—50 պ. մաքուր բամբակ կամ մինչև 120—200 պուդ. բամբակ սերմի հետ միասին։ Այն տեղերում, որտեղ այդ մաքրանքից շատ չը կան և շատ մարդ կարողութիւն չունի նրանց ձեռք բերել, դիւղի ամբողջ հասարակութիւնը կարող է ընդհանուր ոյժով գնել և գործածել։ Մասնաւոր գնողը, եթէ վարձով տալու լինի, կունենայ այնքան շահ, որ մեքենայի ծախքը կը հանի և կունենայ զուտ արդիւնք։

Ն. Տարատինով

տրական և գործարանական ձեռնարկություններ սկսելու, եթե յայտնվի, որ այդ ձեռնարկությունները օգտակար են երկրի և ժողովրդի համար: Այդ տեսակ ձեռնարկությունները իրագործման համար պետք է թող տրվի անշարժ կալուածներին գնում: Բայց զլիսաւորապէս միջոցներ պէտք է ձեռք առնել ան օտարապետականներ և օտար ընկերությունները դէմ, որոնք գալիս են Կովկաս միայն շուտով հարստանալու նպատակով և այդ նպատակի ետեւից ընկնելով, սղարուս են երկիրը և քանդուս են ժողովուրդը, որովհետեւ աշխատանքը յանձնում են կատարելու իրանց ցեղակիցներին և բոլոր կապիտալները տանում են արտասահման:

ԿԱԳՁՈՒՆԻՑ մեզ գրում են. «Մայիսի 28-ին Կապուտանի հայոց դպրոցի դահլիճում դերաստանակներ Կարգիթեր և Մարի-Հրանդի, մասնակցություններ մի քանի սիրողների, ներկայացրին «Մարգարէն սէր» դրաման: Խոյ կերակրի, մայիսի 31-ին, խաղային «Փարիզի շրջովի» կոմեդիան: Ընդհանուր տպաւորութիւնը լաւ էր: Ամեն անգամ խումբը ընդունւում էր բուռն ծափահարութիւններով: Շատ ցանկալի է, որ ամեն տարի, զո՞նէ ամառը, այդպիսի ներկայացումներ լինեն մեր քաղաքում:

ԱՍՁԻՑ մեզ գրում են յունիսի 7-ից. «Երէկ, առաւօտեան ժամը 9-ին, բաղարում մի պարսիկ երկու անգամ ատրճանակ պարպեց մասփաճա երկու պարսիկ ընկերների վրա, բայց նպատակին չը կարողացաւ հասնել: Սարսափահար ժողովուրդը, արդար բարեկամեամբ լցված, շրջապատեց ոճրագործին և տեղի ու տեղը բռնեց իր յանձնեց կառավարութեան: Ասում են որ պատճառը դրամական հաշիւ էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

Մինչդեռ մի կողմից սպանական լրագիրները հաւատացնում են թէ Գվանտանամո շրջակայքում ամերիկական բանակ չը կայ, միւս կողմից գալիս են տեղեկութիւններ այն ընդհարումների մասին, որ ամերիկացիները անընդհատ ունենում են հէնց այդ իսկ տեղում սպանիայիների հետ: Մաղիթի լրագիրներն ասում են, թէ այդ բոլոր լուրերը հնարած են Ամերիկայում. բայց միթէ կարելի է հնարել ամբողջ կուիններ պատմութիւն: Գվանտանամոյ մօտ եղած կուինները, ճիշդ է, մանր-մունր էին, բայց որովհետեւ երկու կողմից մասնակցում են փոքրամիւս զորաբաժիններ, հետաքրքրութիւն է ներկայացնում այն հանդամանքը, թէ առհասարակ ինչպէս են կրուում ամերիկացիները և սպանիացիները: Վերջիններս գործում են մեծ եռանդով և յամառութեամբ, բայց ամերիկական զորաբաժինը, թէև մեծ մասամբ բաղկացած է անփորձ երիտասարդներից, նոյնպէս քաջութիւն և դիմացկունութիւն է ցոյց տալիս: Մի քանի յարձակումներ յետ միեկույց յետոյ ամերիկական հրամանատարը չնորհաւորեց զորաբաժինի ջրով մրկաւորութիւն ընդունելը: Ցամաքային պատերազմի սկիզբը դրված է և պէտք է սպասել, որ շուտով մեծ խմբերի ընդհարում տեղի կունենայ:

Մանիլայի ջրերում առեկտա գերմանական մի մարտանաւ են ընդամենը այժմ Մանիլայի մօտ կանգնած են գերմանական չորս նաւեր, որոնց մէջ կան 3000 լաւ մարտական զինուորային: Անգլիական լրագիրները հարցնում են, որ Գերմանական մարտիկ է թող չը տալ որ Մանիլան ուղարկուի ամերիկացիները: Այդ առիթով Մաղիթի «El Liberal» լրագիրը ասում է. «Եթէ Գերմանիան, իսկ որ, կը բռնէ այդպիսի դերը, այդ կը լինի, ի հարկէ, ոչ թէ դէպի արդար գործն ունեցած մաքուր սիրտը, բայց մենք, այնու ամենայն, այդ դէպքում չէինք կարող չը յայտնել մեր վառ համակրանքը այն ազգին, որ վճռականապէս և ազատ կերպով դէմ է դրում իրանից միջազգային քաղաքակրթութիւնների լուծը, ուշադրութիւն չը դարձնելով եւրօպական դիպլոմատիայի վրա, որ իսկապէս անդօր է: Ֆիլիպինեան կղզիների վրա Գերմանիան դժուարութիւնների չի հանդիպի միւս պետութիւններին կողմից, որովհետեւ փոքրագուծութիւնը մեր ժամանակի գլխաւոր յատկանիշն է»:

Միսիլայի նահապի Մակ-Հէրոն քաղաքում դեղին տենդի մի քանի դէպքեր տեղի ունեցան: Հարաւային Նահանգների մի քանի սենատորներ, այս լուրը ստանալուն պէս խնդրեցին նախագահ Մակ-Կլինթոն, որ հարաւում զօրքերի մեծ կուտակումներ չը լինեն և նրանք տեղաւորվեն բարձր տեղերում: Եթէ դեղին տենդը երկայնջորքերի մէջ, հետեանքները սարսափելի կը լինեն: Հիւանդութիւնը կարող է տարածվել կայ-

ծակի արագութեամբ և այն ժամանակ, անկասկած, պէտք է դադարեցնել պատերազմական գործողութիւնները: Սանտ-Տագոս Կուբայի ամենամեծ անգլիական տեղեկիքը մէկն է համարվում. հակառակ է թէ ինչ մեծ վտանգ կայ ամերիկական այն զօրքերի առաջ, որոնք պիտի դրժեն այդ քաղաքի դէմ:

ՆԱՄԱԿ ԲՈՒԳԱՐԱՅԻՑ

Վ առնա, յունիսի 2-ին

Կ. Պօլսում, Գարաբէօեան Տիգրան կտակով ազգին 80,000 տկի էր թողել: Ընտանիքը չէ ուղում տալ փողը, և տարօրինակը այն է, որ ընտանեաց այժմու պետը, Գրիգոր Բէֆնիկ Գարաբէօեան, անգամ է քաղաքական ժողովի: Պատրիարքարանը իրաւաւորութեան կողմն է: «Մարիս», պ. Զօհրապի բերնով, արդար բողոք է բաժնում: Ցաւում ենք, սակայն, գտնելով լրագրի նոյն թիւին մէջ հայաստան Բահրի փաշայի անարդ կնիքը: Երբեք տարի առաջ, հալածումների առնել, ինչպէս կը հաղորդեն Կ. Պօլսն, գաւառացի մի հայ իսլամութիւնը ընդունում է Կ. Պօլսում և մինչև այս օրս մնացել է մահմէտական: Նա ունի հայրենիքը կին ու դուստրներ, որոնք քրիստոնեայ են դեռ: Թրքացած ամուսինը գրում է հիմա ուղղակի գիւղին իմա՞նք գնալ իր կին ու դուստրներն էլ մահմէտական դարձնել: Կինը չէ ուղում, բայց իմամը և տաճիկ ժողովուրդը այնքան տէրօրինում են բանեցում, որ ոչ միայն եկեղեցի գնալ չէ համարձակվում, հապա տնիցն էլ չէ կարողանում դուրս գալ: Այդ հիմակվում վիճակն է: Ով գիտէ կինը որքան առնել պիտի կարենայ դիմանալ ներկայ և ապագայ ճնշումներին: Այս խնդրին վրա, որը անշուշտ միակը չէ ու նմանները շատ կան, մեր ազգային վարելութիւնները խորին ուշադրութիւնը կը հրաւիրեն:

Մի քանի անգամներ արդէն կեցել Կիւնիայի Միլիթարեաններին և «Բիւզանդիոն» մէջ ծագած պոլէմիկայի վրա: «Հանդէս» գրաձեռնին գլխաւոր մասերը հաղորդած են արդէն Ներքին փախած ուղարկում են ձեռք, իբրեւ օրինակ, Պօլսի սրիկայ, փողոցային ոճի, «Բիւզանդիոն» պատասխանը: Պ. Պօլսի թերթը ուղղակի դիմում է անում հ. Մէնէփիլիանին, կամենալով բողոքովն ան ճնշակաւ դարձնել գործը: Նա անարգում է Մէնէփիլիանին, և նոյն տակն քրծում ուրիշ Միլիթարեաններին: Այդ առիթով հիւրին է թափանցել. «Բիւզանդիոն» ուղում է պատասխանատու անել Մէնէփիլիանին, և զքննութիւն ցանկ յայն ինչն վաճելն մէջ: «Բիւզանդիոն» գովում է Այալնեան, Գալէմբեան և Տաշեան հայրերին, և չէ կարող հասկնալ, որ հէնց իր գովասանքից ակելի մեծ անարգանք էր կրնար անել այդ հայրերին... Փողոցային թերթը հ. Մէնէփիլիանին պատարեալ եղուտ, louche, երկերես, կեղծաւոր, իսկ թերթը՝ «արտաբայ և ճակատաբայ» է անուանում: Ով չը խնդրաւ... Նոյն այդ յօդուածի մէջ մի քանի հայտնանքներ «Մշակին» ուղղելով՝ կարող դուրս Փաշայեանին է գալիս, որին անուանում է լապլաշ: Թարգելի դուրսը թող ներքէ մեզ, բայց նա իր պատիւն է ստանում, «Բիւզանդիոն» մի հետ յարաբերութեան մէջ մտած լինելուն համար... M.

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԳԻՍԻՑ

Կ. Պօլսն, մայիսի 25-ին

Պատրիարքարանի շրջանակէն դուրս յաճախ կը խօսուի նոր եպիսկոպոսոցնեան վրա: Օրումն զլիսաւոր առարկան է այս: Պատրիարքը թէպէտ ինքն ստեղծեց այդ վարդապետներու եպիսկոպոսացումն, որ որոշուեցաւ իսկ կրօնական և քաղաքական ոչ մեծամասնութեամբ կաղմուած խառն ժողովոյ մէջ, կը վարանի այսօր անոնց վկայականները յանձնել, առարկելով թէ՛ անցագրի և ճանապարհի պատրաստութեան համար ամեն գործողութիւններ պէտք է աւարտին: որպէս զի իրաւաւորներն վկայականն իրեն յանձնուի: Եպիսկոպոսոցնեան անցագրիներ պահանջելու համար «Թաքրիք» մատուցած է Բ. Գրան՝ սակայն այդ «Թաքրիք» ետ դարձուած է կառավարութեան վրա: Վրան զի անոր մէջ յիշեալ եպիսկոպոսոցնեան անուններուն առջև «Փալլիթը» (առաքինաւոր) անունը կամ տիտղոսը նշանակուած է եղել, տիտղոս՝ որ մինչև ցարդ չէ արուած քրիստոնեայ եկեղեցականներ:

րու՝ և յատուկ է իսլամ կրօնականներու՝ մասնաւորապէս իրեն պատուոյ ատրիճան (grade) չորհուած սուլթաններու կողմանէ, և այն տաճիկ իւլէմ-ն» որ այդ տիտղոսին կարծանանայ, անշուշտ իր սարք-քին (փաթիթոց) վրա պիտի կրէ այն ատրիճանին համապատասխանող ruban մը՝ ոսկեթել մանուած: Բ. Գրան, կուսակալութեանց, պատրիարքարանի և առաջնորդարաններու միջև փոխանակուած թաքրիքներու մէջ հայ եկեղեցականներու տրուած տիտղոսները՝ թիւթպիթը (իբրեւ՝ բարձրատնային) միայն պատրիարքներու և երեմի գլխաւոր առաջնորդներու կամ արքեպիսկոպոսներու յատուկ, հէօրմէ թիւթ (յարգամեծար), տիրայթիթ (խոհեմալար), քլայաթիթ (խոհեմ) և ասոնց նման անշուշտ բառեր եղած են, պատրիարքը թիւթն ուղած է այդ եպիսկոպոսոցնեան թիւթը ատրիճանաւոր իւլէմ-նեան հետ հաւասար բռնել: սակայն այնպիսի եղաւ. պէտք է սրբազան անշուշտ... քանի որ վերջինեալ ոսկեթել ruban-ը իրենց վերադարձուն վրա կրել՝ մեր հոգեւորականներուն, և կամ ամեն հոգեւորականի գործ չէ՝ այլ «որոց տուեալ է»:

Իզմիրցիները վերջին օրերս իրենց գաւառական ընդհանուր ժողովը կազմելով՝ վիճակին առաջնորդ Ներսէս վարդապետ Արտանեանի համար վերջին ultimatum-ը տուին, այն է երբէք չընդունել իրենց «թոյլ» և «ծոյլ» առաջնորդը՝ թող թէ անոր եպիսկոպոսացման համար վկայական տալ: Իրենց վերջին խօսքը միաձայնութեամբ սոսկ եղաւ. «Թող մեզմէ երկայ, կուղէ կաթիլիկոս ըլլալ»։ «Հորոյ»-ին հային իւղ քսելը իր իրաւունքն է: «Բիւզանդիոն»-ի քսակն ալ բաւական պարարտացուցին, և երբ քսակները կուտին, մանաւանդ այսպիսի պարագաներու մէջ, այլ եւ իր աւուրած և արդարութիւն անշուշտ բառեր չէին: Կրուի թէ իզմիրցիք իրենց նախկին առաջնորդ Մեքլիսիոյ եպիսկոպոսի մեղադարձը մը ուղղելով, վերադառնալով փախաւ զինքը առաջնորդ ճանչել... Եթէ յայտնի, իսկ առաւելոյս չի կայ որ Մեքլիսիոյ եպիսկոպոսը՝ քանի կը ծերանայ՝ այնքան կը ժիւրանայ... Իզմիրցիներուն համար, հետեալը անոր չը պիտի վերադառնալ Արտանեան վարդապետին տրուած յիշեալ չարագուշակ անականները: Բայց ինչ ըսել Կեսարիոյ առաջնորդ Տրդատ վարդապետին՝ որ երկու տարի մէջ մնաց: Երուսաղէմի միաբանութիւնն ալ իր ultimatum-ը այդ չորհուած վարդապետին համար տուել է. մէկ խօսքով, Տրդատ վարդապետ կամ պէտք է երէկ երուսաղէմի միաբանութիւնն ու եպիսկոպոս լինի և կամ, եթէ չուղէր միաբանութիւնը թողուլ, եպիսկոպոս դառնալու համար, պէտք է որ սպասէ իր հրովին... «Բիւզանդիոն»-ի խիստ բարեկամ այս կեանքացի վարդապետը բաւական վարպետութիւն ցոյց տուաւ. այս կնճռոտ իշնդիրը լուծելու համար, բայց բարեբախտաբար երուսաղէմի միաբանութիւնն աւելի վարպետ ըրդաւ: Գիրուկ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Ս աււմաստ, յունիսի 1-ին

Ինչպէս երևում է, սահմանադրի թրքահայաւատակ քիւրդները այս տարի էլ պէտք է բաւական զբաղեցնեն պարսից կառավարութիւնը. նորաւոր դէպքեր պարզապէս ցոյց են տալիս այդ: Մօտ մի ամիս առաջ մի «Ֆէվը» (վաշտ) սարքաշին, երկու լերան թնդանօթներով, ուղեոր-վեցին Սօմա և այս օրերս այնտեղ բաւական նշանաւոր ընդհարումներ պատահեցին քիւրդերի և նրանց մէջ: Մի արեւմտաւոր կուտ, որ տեւել է ամբողջ ժամեր, քիւրդներ յաղթող են հանդիսացել, շարքելով 30—35 պարսիկ զինուորային, իսկ հետեւալ օրը ամբողջ Ֆէվը յարձակում գործելով Սօմայի քիւրդերի դիւղերի վրա, թալանել և աւերել է նրանց: Այժմ մի երկրորդ Ֆէվը էլ գնացել է Սօմա և սպասվում է արեւմտեան ճակատամարտ:

Իրիւմէ-դէբէյում էլ երկէ վերջերը (ասում են ծանօթ Շարաֆ Բէկի մարդիկն են եղել զբռնող) յարձակվել են սահմանապահ պարսիկ զօրքի վրա, որոնք այնտեղ հակողութիւն էին անում, որպէս զի արտասահմանի քիւրդերը Սալմաստի դիւղերից ցորեն չը տանեն, քանի որ անոնք թանգրութիւն է տիրում այժմ և իսլամ ամբողջ Իրիւմէում արդեն մի քանի ցոյցեր արել է ցորենաւաճառների դէմ: Անցեալ օր մինչև անգամ կանայք, փայտերով զինված, յարձակում են գործել նրանց վրա և տեղական կառավարութիւնը որոշել է, որ այսուհետ թող չը տրվի դիւղերից ցորեն վաճառել, այլ պէտք է Իրիւմէի բերքն և այնտեղ ծախելու հրապարակում: Քիւրդները բռնել են այդ սահմանապահ քաջերին և կողոպտել են, խելով նրանց դէմ-քերը, ձիերը և բոլոր ունեցածը, մինչև իսկ

չափիկները: Այս դէպքը հաղորդել է իտիյն հեռագրով Ջարդամին, Սոլում, որն այնպապաղ սպասվում է այստեղ, որպէս զի անձամբ, իբր տարբար, այդ քիւրդերի վրա արշաւէ, վրէժ լուծելու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Կրեական հարցը, հակառակ եւրօպական դիպլոմատիայի ջանքերին, սուլթանի ցանկութեան համաձայն, լուծվելու ոչ մի նշան չէ ցոյց տալիս: Բ. Կուտը, ինչպէս հաւատացնում են զերմանական լրագիրները, պատրաստում է մի նոր ծանուցագիր, որով մտադիր է զինել մեծ պետութիւններին, ինչդրելով վերջ տալ կրեական հարցին: Թուով այդ լինելու դանուցագիրը կը լինի. նրա մէջ սուլթանը դարձեալ պնդելու է, որ չէ կարող համաձայնվել ուսուց տեսակետի հետ: Արդու ձախողը ամենինն դիտաւորութիւն չունի ընդունել Գէօրգի իշխանի թեկնածութիւնը: Եւ թիւրքաց սուլթանի այդ դիտաւորութեան կարծեք ոչ մի տալու համար, զերմանական մի լրագիր ասում է. «Գէօրգի պրինցը չունի ոչ հաստատ կամք, ոչ նախաձեռնութեան ոգի, այսինքն չունի այն յատկութիւնները, որոնք անհրաժեշտ են անպաշտպան կրեականների համար: Անտերուրդում երկուդ են կրում, թէ չը լինի իշխանը իր թող ընաւորութեամբ դուր քայ ուսուց աղբեղութեան տակից և ընկնի Անդրապալ աղբեղութեան տակ: Բացի դրանից, իշխանը կառավարութեան կազմակերպութեան համար ստիպված կը լինի հրախիւղ շատ եւրօպացիներ, որոնք 60 1880 աւելի հակված կը լինեն դէպի արեւմուտը: Վերջապէս, չը պէտք է մոռանալ թէ ինչ դժուարութիւններ կան իշխանին իր պաշտօնում հաստատելու համար: Ռուսաստանը, որ մի ժամանակ մտածում էր ոչով հաստատել նրան, այժմ հրաժարել է այդ մտքից: Ընդհանուր դրութիւնը շատ լուրջ է և Ռուսաստանը դժուար թէ կամենայ դիմել ոչով: Բացի դրանից, ինչպէս կարելի է արդատվել 9000 թիւրք զօրքից, որ գտնվում է Կրեականում: Մանաւանդ այժմ, երբ Թեաւիլան թողնելու պատճառով, սուլթանը իր տրամադրութեան տակ ունի զինուորական մեծ զօրութիւն, այդ մասին մտածել անգամ չէ կարելի: Ոչ մի երբ չը կայ այդ վիճակից և չէ կարելի ոչ մի քայլ առաջ գնալ: Պէտք է առ այժմ թողնել նահանգապետի հարցը»:

— «Temps» լրագրի թղթակիցը Կ. Պօլսից հաղորդում է, որ այնտեղից սկսում են հեռացնել վերջին պատերազմում մասնակցած օֆիցերներին: Սուլթանը Հաքըն փաշային նշանակեց հրամանատար Սիւրիայում, փոխարէն Արտուրաս փաշայի, որ ուղարկվում է Մեմիս Կուտ-Կափուրի հայերի մէջ նկատվում է ինչ որ կենդանութիւն: Նրանք, ըստ երկուսի, ինչ որ դէպքերի են սպասում: Կ. Պօլսի ոտովկանութիւնը շատ հասցի կալանաւորեց:

— Նմենից ստացած վերջին տեղեկութիւններն հայերով, դրութիւնը այնտեղ շատ ծանր է, որովհետեւ արդէն յետ կանչված Ֆէվ-փաշան իր խտուրթիւններով գրգռել է աղգաբնակութիւնը, որ Սանում պաշարել է նոր նահանգապետ Հուսէյն-Խիւլէ-Բէֆէնիկին:

— Տրամախական լրագիրները հաղորդում են որ սուլթանը հրամայեց արձակել 25 բանտարկված հայեր:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Եւրօպայում վերջերս սկսել են Լե Տօլուտոյին «Grand moujik» (մեծ մուժիկ) անունը տալ: Այս օրերս Լեճուտում միտարը Պէրլին հռչակաւոր ուսուց գործի մի ընդարձակ կենսականութիւնը հրատարակեց, որի մէջ նա առաջ է բերում բազմաթիւ նկարագիրներ, լաւ և վատ, նպաստաւոր և անպատու մեծ մուժիկի մասին: Տօլուտոյ յարաբերութիւնները Տուրքիանովի հետ, նրա երկրագործական և կրթական փորձերը և նրա, իբրեւ սօցիալական վերադարձի ընթացիկներ, երկարված են զննադատութեան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱԿԻՐԻ, 9 յունիսի: Պաշտօնական հեռագիրը Մանիլայից հաղորդում է, որ դրութիւնը վատացաւ:

Հալմանայից հեռագրում են, որ ապստամբները յարձակում գործեցին Գերադուրի վրա, բայց յետ մղվեցին:

Սպանիական բանակը հաղորդում է, որ արտաքին փոխաւորութեան կուսակցներով վճարումը կը սկսվի այսօր:

ՎԱՇԻՆԴՏՈՆ, 9 յունիսի: Կառավարութիւնը հեռագրի ստացաւ, որ ծովապետ Կամարէի նահատարը վերադարձաւ սպանիական նահանգի դիտը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 յունիսի: «Русскія Инвалиды» լրագրում տպված է. «Ֆեդրանեան շրջանում տեղի ունեցած անկարգութիւնները, որոնք արտապայովեցան Անդիմանի բանակի վրա յարձակումով, նախաժողոված էին դեռ մօտ

